## «ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ ՎԱՃԱՌՒՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ.

| | ր. | կ. |
|---|---|---|
| «ՄՈՒՐՃ» *ամսագիր*, 1889 *թ.*, *երկու հատորով* | 12 | — |
| ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ Ա. — «*Ազգաբնակութիւնը և ազգաբնակչական շարժումները*» | — | 40 |
| ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿ. — «*Հողատիրութիւնը և հասարակութիւնը*» | — | 40 |
| ԲՕԿ *բժիշկ*. — «*Ֆիզիքական և մտաւոր զարգացման մասին*» | — | 30 |
| АРАСХАНІАНЦЪ А. — „Закавказская хлѣбная торговля" | — | 75 |
| „ „ — „Закавказскіе шелкометальные заводы" | — | 80 |
| ՊՌՕՇԵԱՆՑ ՊԵՐՃ. — «ՑԵՑԵՐ» — (*վէպ*) | 1 | — |
| ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (*Ղզլարցի*)՝ *Մանկաբարձութիւն* | — | 50 |
| ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ» — *վէպ հայ-կաթոլիկների կեանքից* | 1 | — |
| ԼԷՕ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» — (*վէպ*) | — | 50 |
| ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ, *բժշկ.* (*Ղզլարցի*)՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ. ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ» | — | 5 |
| ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ ՍՈՂՈՄՈՆ. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ։ (*Կեանքից պատկեր*) | — | 40 |

*Ճանապարհածախսը խմբագրութեան վրայ է։ Դրամի տեղ կարելի է ուղարկել պօստի մարկաներ։*

# TECHNIKUM MITTWEIDE

# ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԷ

## *Սաքսօնիայում*

ԴԻՐԵԿՏՈՐ՝ **ԻՆԺԵՆԵՐ Կ. ՎԷՅՑԷԼ**

**ՄԵՔԵՆԱՆԵՐԻ-ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ**

**23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ**

---

Այս դպրոցը, որը գտնւում է Միտվայդէ քաղաքում, Գերմանիայում (Թագաւորութիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵՔԵՆԱՆԵՐ շինելու և դորա ամենամօտ առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ էլեկտրօ-տեխնիկ և ջրաղացների շինութիւն։

Սիստեմական ուսումով այդ հիմնարկութիւնը պատրաստում է հետևեալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կոնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, էլեկտրօ-տեխնիկի և ջրաղացներ շինելու համար։

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց տորադրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն։

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւորւում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փայտանիւթերի գործարաններ, շոգի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախմալի, շաքարի, ասեղների, պողպատէգրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարաններ, գազի, լուցկիի գործարաններ և այն և այն։

4. Դիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար յիշեալ գործարանների համար։

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար։

Ընդունելութիւնը լինում է ամեն տարւայ ապրիլի և հոկտեմբերի միջին։

ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ ուսման առաջին դպրոցում, նայած աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է $2^1/_2$ կամ 3 տարի, երկրորդ դպրոցում $1^1/_2$ տարի։

ՏԱՐԻՔԸ ընդունւողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս։

Սոյն $18^{89}/_{90}$ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, որոնցից Ռուսաստանից՝ 66 հոգի։

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է դիմել «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, ուր ի միջի այլոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտվայդէի կեանքի, և դպրոցի վարչութեան պահանջմունքների մասին։